

իտալեայուն: Քաղաքն մեծ է վարըշոզն, և ընդարձակ յոյժ. և ըստ կարծեաց իմոց ըստ մեծութեան զալաթեային է, և բազմամարդ է: Եւ երկվարք և ձիք կառամուտք անհամարք, գեղեցկատեսիլք և յաղթանդամք և ուժաւորք. և ի ներքոյ արեգականն չիք նոցին նմանք ըստ վկայելոյ բազմաց. բայց կեցցէ վասն իմ Վէնէտիկն օրհնեալ, որ առաւել է քան զսա յաչս իմ. քանզի ընդ մտանելս ի քաղաքս յայս, տաղտկացայ յոյժ, քանզի համարիմ թէ յամենայն ժամ ի գիշերի և ի տունջեան ի պանդոկի պղնձագործի եմ ի շառաջմանէ կառաց, և փոշին ամպասարաս անդուլ անդադար շուրջ կայ դիզացեալ զքաղաքաւ: Երբէք ոչ ծառայէ յամառոս սեւազգեցիցն շրջիլ աստ. իսկ ի ձմեռոս անհնարին ցեիք փողոցաց ոչ թողու զմարդն ելանել արտաքս. կանայք նոցա այնչափ համարձակք են որ [ոչ] կարէ պատմիլ. և լաւ լինէր այրական զգեստ զգեհուլ. և են քար զայթակղութեան արեւելցոց. բայց վասն իւրեանց քաղաքին ոչ այնչափ վասն սովորութեան. և զրեթէ ամենեքին արք պատերազմօղք են. և այն նրբութիւնն մտաց, և այն քաղցրաբարոյութիւնն և այն ազնուութիւնն զոր ունին Վենէտիկեցիք աստ ոչ գտցես. և ամենայնիւ իբրև սեռու տարբերի ի Վէնէտիկոյ. բայց քանզի թրաֆէրմա՛ է, վասն այսորիկ ընդարձակ է քաղաքն. և ունի հրապարակս բազումս և աղբիւրս և վտակս հանապազաբուղիս. սուրբ ստեփաննոսի ժամն մեծութեամբ նմանէ սան ձիւվանի փոլօյին. յիրաւի մեծաշէն է և բարձրաբերձ. բայց կարի յոյժ հնացեալ է. զանգակս ունի քաղցրահնչիւնս. բայց ցանցառ հնչեցուցանեն: Թողեալ զայստիկ եկեսցուք ի պատմել զերկրէ և զթագաւորութենէ սորա. յիրաւի շէն է յոյժ. չեմ տեսեալ շէն երկիր և պտղաբեր քան զսա առաւել. ի թրեստու մինչև ցվեննայ բիւրաւոր էին զիւզօրէք և զիւղաքաղաքք. ամենեքին շինուածովք էին իբրև զքաղաքս: Լերինք բազումք էին, բայց ոչ իբրև զլերինս Եփրատայ և քիւրտուս տանու և մէրտինու և ուռումգալայու: Առքա անբոյսք, բայց այսօրիկ զորս տեսի այժմ, լի են տամբ և բնակութեամբ. և վար և ցան անպակաս. թող զի լի են հրահալելեօք ոսկուովք և արծաթօք: Ասեն թէ այժմ զոր ինչ փարթամութիւն ունի թագուհին, երբէք ոչ է ունեցեալ այն տունն յայլում ժամանակի. և ամենայնիւ զօրացեալ է. տէր յիսուս յաւելցէ և առաւելցէ. բազում ինչ գոն պատմելիք, բայց այժմ անհնար է. ուստի եթէ տեսան կամք հաճեսցի և առ ձեզ դարձայց ողջութեամբ, յայնժամ պատմեցից լիով:...

Տեսի աստ զարքունի գրքատունն և հիացեալ զարմացայ ընդ մեծութիւն նորա, ընդ հրաշալի ձևն և ընդ մաքրափայլութիւնն: Տեսի անդ և զժամացոյց մի հրաշալի ըստ որում բազում չարիւի պտոյտ տայր և երկրիս բոլորն և աստեղաց բոլորն և կենդանակերպք և աստեղք մոլարք: Տեսի անդ և զայն հրաշալի շէնքն պղնձեայ յորում ցուցանին ամենայն շարժունք երկնից մանրագնին, ընդ որս յոյժ փշեցայ. յիրաւի կարեմ ասել թէ այսպիսի գրքատուն չիք ուրեք, զի ամենայնիւ կատարեալ է. անթիւ են ի նմա ձեռագիրք իւրեանց լեզուին և Ֆրէնկէրէն գրեանք ոսկետառք: Համառօտիւ ասեմ անպատմելի է ամենայնիւ այս գրքատունս. այսօր փոռչին էլչին ել և զնաց ի վննայու. և յամենայնում աւուր զօրք անցանեն ձիաւորք և ոտանաւորք. ասեն թէ զլիփրստան կողոպտեալ է փոռչեան. և առեալ է ի վաճառականաց իբրու երեք միլեօն ստակ: Յ փատրի եկն աստ սօլտատի զգեստով փախուցեալ ի փոռչեայէն: Ապասեմ ոմանց պաշալովցոց. դեռ ոչ եկին. ընդ զալ նոցա աստուծով ճանապարհորդիմ: Ողջ լերուք ի տէր: Ամենեցուն ողջոյն մատուցանեմ սիրով:

յամի տեսան 1756 սեպտեմ. 10
ի Վիէննայ

Ն. Ծ. Հայր Գէորգ Պաղտատեան
և անարժան Վրդ. Մխիթարեան

Մ.

Թէ ինչ դիմումներ կատարուած են Մարիամ Թերեզա կայսրուհւոյն մօտ մեր Պաշպալովի վանատան հաստատութեան համար՝ ահա նամակ մը:

1. Terra ferma = ճամաք երկիր.